ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«29» 09 2021թ.

ՀՐԱՄԱՆ N 495-Հ

«ՎԻԶ ԷՅՐ ԱԲՈՒ ԴԱԲԻ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի ԹԻՎ 273-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով, «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով «Վիզ Էյր Աբու-Դաբի» ավիաընկերության 2021 թվականի սեպտեմբերի 16-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Վիզ Էյր Աբու Դաբի» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Աբու Դաբի/OMAA/-Երևան/UDYZ/-Աբու Դաբի/OMAA/ երթուղով՝ 2021 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև 2022 թվականի մարտի 23-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Նկատի ունենալով, որ Ընկերությունը օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ձմեռային ժամանակահատվածում 2021 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև 2022 թվականի մարտի 23-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Աբու Դաբի/OMAA/-Երևան/UDYZ/-Աբու Դաբի/OMAA/ երթուղով Հայաստանի Հանրապետություն տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթերի հաճախականությունների պահանջներին՝ սույն կետում նշված Երևան/UDYZ/-Աբու Դաբի/OMAA/ երթուղով մեկնող ուղևորներին տրամադրվող «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով սահմանված արտոնության սկիզբ սահմանել 2021 թվականի հոկտեմբերի 31-ը՝ 36 ամսով: Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ամառային ժամանակահատվածի մասով արտոնության վերաբերյալ դրույթները կսահմանվեն առանձին հրամանով՝ Ընկերության կողմից ներկայացվող հայտի հիման վրա:

3. Հաշվի առնելով, որ «Էյր Արաբիա Աբու Դաբի» ընկերությունը չի իրականացրել Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի 2021 թվականի հունիսի 1-ի թիվ 273-Ա հրամանի (այսուհետ՝ Հրաման) 1-ին կետով սահմանված ժամանակահատվածում որևէ չվերթ՝ Հրամանի 2-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

4. Կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը քաղաքացիական ավիացիայի Կոմիտեի կայքում:

5. Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պաշտոնակատարին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

9/29/2021

X

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

Signed by: REVAZYAN TATEVIK 7201880926

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 136/2021
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 136/2021
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Օդանավշահագործողը Aircraft Operator	«Վիզզ էյր Աբու-Դաբի» ՍՊԸ "Wizz Air Abu Dhabi" LLC
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	A321
Հաճախականությունը Frequency	շաբաթական 2 չվերթ 2 flights per week
Երթուղին Air route	Աբու-Դաբի/OMAA/-Երևան/UDYZ/-Աբու-Դաբի/OMAA/ Abu Dhabi/OMAA/-Yerevan/UDYZ/-Abu Dhabi/OMAA/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	31/10/2021 մինչև 23/03/2022 31/10/2021 till 23/03/2022

9/29/2021

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ
CHAIR OF CIVIL AVIATION COMMITTEE
TATEVIK REVAZYAN

Signature
Signed by REVAZYAN TATEVIK 2301880926

29.09.2021
(տալու ամսաթիվը)
(date of issue)